

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ՀԱԲԻԲ ՂՈԼԱՍ ՇԱՀՁԱՐԻ

**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԴԵՐԸ ԻՐԱՆԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

**ԺԳ. 00.01-«Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ
մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2014

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

Մանկավարժական գիտությունների
դոկտոր Ն.Կ. Հարությունյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Մանկավարժական գիտությունների
դոկտոր՝ Ս.Ս. Սողոյան
Մանկավարժական գիտությունների
թեկնածու՝ Գ. Հ. Հակոբյան

Առաջատար կազմակերպություն՝

Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան
պետական մանկավարժական
ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014թ.մարտի 28-ին ժամը 14⁰⁰-ին,
ԵՊՀ-ում գործող ԲՈՀ-ի մանկավարժության 065 մասնագիտական խորհրդում:
Հասցեն՝ 0025, ք. Երևան, Աբովյան 52^ա, ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի
մասնաշենք, թիվ 203 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է փետրվարի 27-ին:

Մանկավարժության 065 մասնագիտական
խորհրդի գիտական քարտուղար,
Մանկ.գիտ.թեկնածու, դոցենտ՝



Ա.Փ.Նալչարյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը

Տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների զարգացումն այսօր արմատապես փոխել է մարդկային կյանքը կրթության, արդյունաբերության, առևտրի, գիտության, մշակույթի և այլ ոլորտներում՝ խթանելով նորարարություններ և ստեղծելով նոր որակ ու մակարդակ: Այս երևույթի էությունը և նրա տարբեր հետևանքների համակողմանի ըմբռնումը «Տեղեկատվական դարի» անհրաժեշտ նախապայմաններից է, սակայն առանց վերլուծական համապատասխան գործիքակազմի, որով սահմանվեն այս համատարած գործընթացի տարբեր բաղադրիչներն ու կողմերը, հնարավոր չէ այն կիրառել նպատակային ու ինտելեկտուալ ի նպաստ տվյալ երկրի զարգացմանն ու առաջընթացին:

Արդի մշտափոփոխ և արագ զարգացող պայմաններում բարձրագույն կրթության համակարգը պետք է կարողանա համընթաց քայլել ժամանակի պահանջներին և վերագինվել աշխատանքային նոր եղանակներով: Արդի հասարակությունը «տեղեկատվական հասարակություն» է, որով ավելի հրատապ են դառնում կրթության համակարգ-հասարակություն փոխհարաբերության նոր սահմանումները:

1980-ականներից սկսած հաշվիչ հնարավորությունների, համակարգչային կիրառական ծրագրերի և ցանցերի սրընթաց զարգացումները, նաև տեխնոլոգիաների գների նվազումը, դրանց հասանելիության մեծացումն ու կիրառման մատչելիությունն աննախընթաց կերպով ընդլայնել են ՏՏ-ի սոցիալ-տնտեսական ներազդեցության դաշտը: Վերջին երկու տասնամյակներում ՏՏ-ի զարգացումներն ամբողջովին փոխել են կառավարման ու վարչարարության գիտական մեթոդները: Տեղեկատվության և հեռահաղորդակցության բնագավառի հեղափոխությունը համեմատվում է արդյունաբերական հեղափոխության հետ: Դժվար է ամբողջապես պատկերացնել ՏՏ-ի ազդեցության բոլոր կողմերը հասարակության վրա: Աշխարհը հասել է մի դարաշրջանի, երբ առկա գործիքները, բարդ լինելով հանդերձ, էժան են ու վստահելի:

Բարձրագույն կրթության համակարգը գիտելիքի և տեղեկատվության արտադրության ամենամեծ և գլխավոր կառույցն է: Այսօր բուհերը ոչ միայն կատարում են գիտելիքների փոխանցման, կարողությունների բացահայտման և ընդունակությունների զարգացման գործառույթները, այլ նաև կրթում և դաստիարակում են ստեղծագործական միտքը, նորարարական-նախաձեռնողական միտումները: Ահա այստեղ չափազանց որոշիչ դեր ունեն ՏՏ-ը:

ՏՏ-ի ներմուծումը բարձրագույն կրթության ոլորտ, իրականում, նպատակ ունի ապահովել «ձկուն» ուսումնասիրություն: ՏՏ հասկացությունը ենթադրում է կրթական կառույցների, դասախոսների և ուսանողների միջև բազմաշերտ փոխհարաբերություններ: Այս գործոնի ներմուծմամբ անհրաժեշտ է, որ դասախոսներն ու գիտաշխատողները նորովի մոտեցում որդեգրեն ուսուցման մեթոդների ու միջոցների նկատմամբ:

SS ներդրումը խթանում է ուսուցման ինտերակտիվ և կենսունակ մեթոդները, որտեղ ուսանողները հանդես են գալիս առավել ակտիվ ու ստեղծագործ, ուսուցումը կազմակերպվում է առավել փոխգործակցային հիմքերով և «ուսանողակենտրոն» մոտեցումներով: SS-ի օգնությամբ կամ միջոցով իրականացվող կրթությունը սովորողների մոտ խթանում է ինքնուրույն աշխատելու, թիմային փոխհարաբերություններ ծավալելու և վերլուծական ու քննադատական հայացքով դիտարկելու կարողություններ:

Ժամանակակից աշխարհում հիմնական հանրակրթական ուսումը բավարար չէ սովորողի ամբողջ կյանքի համար, այն պարբերաբար լրամշակման կարիք է զգում: SS-ի հնարավորությունները մեծապես կարող են նպաստել անձի ինքնակրթության ու ինքնագարգացման և աշխատողների վերապատրաստման գործընթացին, ընդ որում թե՛ տեսական, և թե՛ գործնական գիտելիքների ու հմտությունների առումով, իսկ կրթության համակարգում այդ հնարավորությունների ներդրումը պահանջում է մշակութային, հասարակական և տնտեսական համապատասխան ենթակառույցներ:

Հետազոտության **արդիականությունը** պայմանավորված է կրթության համակարգում SS-ի խոր և լայնածավալ ազդեցությամբ, այն առավել հրատապ ու անհրաժեշտ է, հատկապես, Իրանի՝ որպես զարգացող երկրի համար:

Հետազոտության **հրատապությունն ու կարևորությունը** պայմանավորված են բարձրագույն կրթության համակարգի առջև կանգնած նոր մարտահրավերների և հեռանկարների հանգամանքով, որը պահանջում է համակողմանի ուսումնասիրություններ: «Ապագայամետ կրթություն» ապահովելու համար կարևոր է հաշվի առնել վեց գործոններ ու ցուցիչներ՝ 1. Կրթության որակը 2. Կրթության արդյունավետությունը 3. Հատկացվող ծախսերը 4. Բազմակողմ ծառայությունների մատուցումը բուհերին 5. Ուսանողներին գրավելու մրցակցությունը 6. Հասարակության մեջ սովորողների նոր խմբերի ու շերտերի ի հայտ գալը (օտարերկրյա ուսանողներ կամ մշտական սովորողներ և այլն):

SS-ի և հեռահաղորդակցության տեխնոլոգիաներն ընդհանուր առմամբ ունեն չորս գլխավոր բաղադրիչներ ու կողմեր: Դրանք են.

1. Համակարգչային սարքավորումներ (սարքակազմ/սարքաշար) (SS ոլորտի կոշտ և մետաղե սարքեր և գործիքներ, համակարգիչ, հեռախոս, ցանցային կապ և հնարավորություններ):
2. Ծրագրային ապահովում և տեղեկատվական գործոն (համակարգչային տարբեր կիրառական ծրագրեր, էլեկտրոնային գրքեր ու աղբյուրներ, գրադարաններ, տեղեկատվական և մասնագիտական կայքէջեր):
3. Մարդկային ռեսուրսներ (մասնագետ կադրեր և մարդկային ներուժի պատրաստում, օգտատերերի հետաքրքրությունները, մոտիվացիան և համակարգչային հմտությունների մակարդակը):

4. Կազմակերպչական գործոն (SS ներդրմանն ուղղված հեռահար ծրագրեր, պլանավորումներ, պետական աջակցության և ֆինանսական հովանավորման քաղաքականություն, ոլորտի կարգավորում, համակարգում և կազմակերպում):¹

Բարձրագույն կրթության համակարգում այս գործոնների և բաղադրիչների ներդրման տարբեր կողմերն ու ազդեցությունները խոր հետազոտություն են պահանջում, և սույն աշխատանքը մի քայլ է այս ուղղությամբ:

Հետազոտության նպատակը

Ատենախոսության նպատակն է ուսումնասիրել և վերլուծել Իրանի բարձրագույն կրթության ոլորտում SS-ի ներդրման ազդեցությունը կրթության որակի բարելավման ուղղությամբ:

Հետազոտության օբյեկտը

Հետազոտության օբյեկտը ԻԻՀ բարձրագույն կրթության համակարգն է՝ շեշտը դնելով Իրանի Բուշեհր նահանգի բուհերի գործունեության վրա:

Հետազոտության առարկան

Հետազոտության առարկան ԻԻՀ Բուշեհր նահանգի բուհերում բարձրագույն կրթության որակի բարելավման ուղղությամբ SS-ի ազդեցության, տարբեր բաղադրիչների ներդրման ուսումնասիրությունն է:

Հետազոտության գիտական վարկածը

Եթե Իրանի Բուշեհր նահանգի համալսարաններում ավելի մեծ նշանակություն տրվի SS-ի չորս հիմնական բաղադրիչներին (այսինքն սարքավորումներին, ծրագրային ապահովմանն ու տեղեկատվական գործիքակազմին, մարդկային ներուժին և կազմակերպչական ու ենթակառուցվածքային գործոններին), ապա անհամեմատ կբարելավվի բարձրագույն կրթության որակը:

Հետազոտության խնդիրները

Հետազոտության նպատակն իրականացնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. Ընդհանուր գծերով դիտարկել Իրանի բարձրագույն կրթության համակարգի պատմական զարգացման ուղին:
2. Լուսաբանել Իրանի բարձրագույն կրթության քաղաքականությունը, նպատակներն ու մարտավարությունը:
3. Ուսումնասիրել կրթության ոլորտում SS-ի ներդրման (կրթական տեխնոլոգիաների և հեռավար կրթության) վերաբերյալ տարբեր մոտեցումները:
4. Քննել կրթության որակի տարբեր ընկալումներն ու սահմանումները:

¹ Ֆաթիյան Մ., Մահդավինուր Հ, Տեղեկատվական տեխնոլոգիաների հիմունքները և կառավարումը, Թեհրանի Պոլիտեխնիկ համալսարանի հրատարակչական կենտրոն, Թեհրան, 2006 թ., էջ 32:

5. Վերլուծել Իրանի բարձրագույն կրթության համակարգում SS-ի տարբեր բաղադրիչների ներդրման ներկայիս մակարդակն ու վիճակը:
6. Վերլուծել բարձրագույն կրթության ոլորտում SS-ի ներդրման անհրաժեշտությունը, ազդեցությունը, հետևանքները և SS-ի միջոցով իրականացվող կրթության առանձնահատկությունները:
7. Մշակել ուսումնասիրվող հիմնախնդրի վերաբերյալ սոցիալական հարցաթերթիկ, իրականացնել սոցիալական Բուշեի նահանգի բուհերի դասախոսների և ուսանողների շրջանում և վիճակագրական վերլուծության ենթարկել սոցիալական տվյալները, գնահատել ու մեկնաբանել ստացված արդյունքները:

Հետազոտության մեթոդաբանական հիմքերը

Հետազոտության համար մեթոդաբանական հիմք են հանդիսացել կրթության կառավարման տարբեր տեսությունները՝ Ֆրեդերիկ Վինսլո Թեյլորի, Էլթոն Մեյոյի, Մաքս Վեբերի տեսությունները, նաև կրթության որակի ապահովման հիմունքներն ու սկզբունքները, Էլեկտրոնային կրթության և Էլեկտրոնային ուսուցման հիմնադրույթները: Հետազոտության համար հիմք են ընդունվել որակի սկզբունքների վերաբերյալ հայտնի մասնագետների՝ Ֆ.Քրազբիի, Ա. Ֆիզենբամի, Է. Դեմինգի և Կ. Իշիկավայի տեսակետները, նաև նույն հարցի վերաբերյալ իրանցի մասնագետների՝ դոկտ. Ալի Ալադեբանդի, դոկտ. Աբբաս Բազարգանի, Նադեր Ալի Ղուրջանի, դոկտ. Ղուլամ Ալի Մոնթազերիի, դոկտ. Քիումարս Նիա Ազարիի, դոկտ. Ալի Աբբար Ջալալի մոտեցումները:

Հետազոտության մեթոդները

- Տեսական գրականության և տարբեր սկզբնաղբյուրների մշակում:
- Անկետավորում, տեղեկությունների հավաքում և խմբավորում:
- Վերլուծություն, համադրում, համեմատում, պատմական վերլուծություն:
- Սոցիալական կազմակերպում:
- Վիճակագրական, մաթեմատիկական մեթոդներ:

Սոցիալական արդյունքում ստացված տվյալները ենթարկվել են համակարգչային SPSS 16 ծրագրով վերլուծության:

Հետազոտության տեսական նշանակությունը

Ուսումնասիրելով կառավարման գիտության և որակի ապահովման տարբեր տեսություններն ու մոտեցումները, հետազոտության մեջ տեսականորեն սահմանվել են տեղեկատվական ու հեռահաղորդակցական տեխնոլոգիաների տարբեր հասկացություններն ու բաղադրիչները: Տեսական վերլուծության են ենթարկվել SS ոլորտի բաղադրիչների ազդեցությունն ու դերը բարձրագույն կրթության որակի ապահովման ու բարձրագույն գործում:

Հետազոտության գործնական նշանակությունը

Հետազոտության տեսական ուսումնասիրությունները և սոցիալական արդյունքների գիտական վերլուծության արդյունքները կարող են օգտակար լինել Իրանի Բուշեի նահանգի բուհերի ղեկավարների և ընդհանրապես Իրանի բարձրագույն կրթության համակարգի պատասխանատուների համար: Հետազոտության արդյունքները կարող են տեսական և գործնական հիմք լինել Իրանի բարձրագույն կրթության համակարգում SS-ի ներդրման ու կիրառման ծրագրերի և նախագծերի, այս ոլորտի հեռահար քաղաքականության մշակման ուղղությամբ: Հետազոտության արդյունքները կարող են օգտակար լինել Իրանի բարձրագույն կրթության համակարգն ուսումնասիրողների, այս ոլորտի ուսանողների և հիմնախնդրով զբաղվողների ու հետաքրքրվողների համար:

Հետազոտության գիտական նորույթը

Այս հետազոտության մեջ փորձ է արվել մանրամասն ու համակողմանիորեն քննարկել SS-ի, մասնավորապես, նրա չորս բաղադրիչների (սարքավորումների, ծրագրային ապահովման ու տեղեկատվական գործիքակազմի, մասնագետ ուժերի և կազմակերպչական գործոնի) ազդեցությունն Իրանի Բուշեի նահանգի բուհերի կրթության որակի բարձրացման գործում: Մեր հետազոտությունը նոր դիտանկյունից է վերլուծել հարցը՝ ուսումնասիրվել է Իրանի Բուշեի նահանգի համալսարաններում SS-ի ներդրման ազդեցությունը և բացահայտվել SS ոլորտի չորս գլխավոր բաղադրիչներից ամեն մեկի ազդեցության չափն ու ծավալը կրթության որակի բարձրացման գործընթացում:

SS-ի տարբեր բաղադրիչների ներդրման ազդեցությունը տեսականորեն վերլուծելուց հետո, հիմնախնդրի վերաբերյալ անցկացված սոցիալական արդյունքում առաջին անգամ արձանագրել ենք այն տվյալները, որ կրթության որակի բարելավման ուղղությամբ բուհերի դասախոսներն առավել կարևորել են կազմակերպչական բաղադրիչի դերը, իսկ ուսանողները՝ ծրագրային ապահովման ու տեղեկատվական գործոնի նշանակությունը: Հետազոտության արդյունքների հիման վրա առաջին անգամ հանգել ենք այն եզրակացության, որ Իրանի բարձրագույն կրթության շահակից կողմերի՝ դասախոսների և ուսանողների այս պահանջումների բավարարումը բարենպաստ ազդեցություն կարող է ունենալ կրթության որակը բարձրացնելու ուղղությամբ: Կրթության որակի բարձրացման նպատակով շահակիցների պահանջումների բավարարումը նոր մոտեցում է Իրանի բարձրագույն կրթության ոլորտում:

Պաշտպանության ներկայացվող դրույթներ

1. Ներկայումս մեծացել է բարձրագույն կրթություն ստանալու պահանջարկն Իրանում, և նկատի առնելով վերջին տարիներին Իրանի բարձրագույն կրթության քանակական ցուցանիշների բարելավումը, կարևոր ու հրատապ են նաև Իրանի բարձրագույն կրթության որակի բարձրացման հրամայականները:

2.Իրանի բարձրագույն կրթության համակարգի ֆինանսավորումը և տարբեր բյուջետային առաջնահերթություններն ու հատկացումները լուրջ բարեփոխումների կարիք ունեն:

3.Իրանի բարձրագույն կրթության որակը կարիք ունի բարելավման և մշտադիտարկման՝ այն համապատասխանեցնելով միջազգային չափանիշներին:

4.Տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաները դյուրացնում են ուսուցման գործընթացի կազմակերպումը, որով և նպաստում են կրթության որակի ապահովմանն ու բարձրացմանը:

5.Տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների զարգացման ու ընդլայնման գործընթացը կարևոր դեր ունի երիտասարդներին ներգրավելու և բարձրագույն կրթությունը երկրի ներսում ստանալու ուղղությամբ:

Սոցիալական քաղաքացիական

Սոցիալական քաղաքացիական են կազմում Բուշեիր նահանգի Իսլամական ազատ համալսարանի, «Պարսից Ծոց», «Փայամ նուր», «Ալ-Ջահրա» «Գիտակիրառական» և «Բժշկական» համալսարանների փորձագիտականի բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողները և դասախոսներն ըստ հետևյալ կարգի.

Աղյուսակ 1

Ուսանողների և դասախոսների թիվն ըստ համալսարանների

Համալսարան	Ուսանողների թիվ	Դասախոսների թիվ
«Պարսից ծոց» համալսարան	4349	131
Իսլամական ազատ համալսարան	11063	134
«Փայամ նուր» համալսարան	2000	55
Բժշկական համալսարան	1107	99
Գիտակիրառական համալսարան	1200	98
«Ալ-Ջահրա» համալսարան	800	90

Այս բազայից դասային պատահականության հիմքով ընտրվել են 404 մասնակիցներ՝ 323 ուսանողներ և 81 դասախոսներ:

Հետազոտության իրականացման փուլերը

Հետազոտությունն իրականացրել ենք չորս տարիների ընթացքում հետևյալ փուլերով.

1. **Առաջին փուլ** (2008-2009). հավաքել և ուսումնասիրել ենք հետազոտության վերաբերյալ համապատասխան տեսական գրականություն:

2. **Երկրորդ փուլ** (2009-2010). վերլուծելով տեսական գրականությունը որոշարկել ենք հետազոտության հիմնախնդիրը, շարադրել ատենախոսության առաջին և երկրորդ գլուխները: Հրատարակվել է 1 գիտական հոդված:
3. **Երրորդ փուլ** (2010-2011). պատրաստել ենք սոցիալական հարցաթերթը և իրագործել սոցիալական հարցումը, հավաքել անհրաժեշտ տեղեկատվություն Իրանի Բուշեհր նահանգի համալսարանների վերաբերյալ, հրատարակել 1 գիտական հոդված:
4. **Չորրորդ փուլ** (2011-2012). Խմբավորել և վիճակագրական վերլուծության ենթ ենթարկել սոցիալական արդյունքները, կատարել համապատասխան հետևություններ: Աշխատանքի շարադրանքը հասցրել ենք ավարտին: Ատենախոսության վերաբերյալ հրատարակել ենք 1 գիտական հոդված: 2013 թվականին հրատարակվել է ևս 1 հոդված:

Հետազոտության փորձաքննությունը կատարվել է Երևանի պետական համալսարանի մանկավարժության ամբիոնում, գիտափորձի բազան հանդիսացած ուսումնական հաստատություններում, հրատարակված գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածից: Ատենախոսության ծավալը կազմում է համակարգչային 154 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվել են ատենախոսության արդիականությունը և հրատապությունը, ձևակերպվել են հետազոտության նպատակը և առաջադրված խնդիրները, վարկածը, ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, մատնանշվել են հետազոտության գիտական նորույթը և պաշտպանվող դրույթները, մեթոդաբանական հիմքերը և կիրառված մեթոդները, աշխատանքի տեսական ու գործնական նշանակությունը, փորձաքննությունը, կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսության **առաջին գլուխը** վերնագրված է՝ **«Իրանի բարձրագույն կրթության պատմությունը և ներկա վիճակը»** և ունի չորս ենթագլուխ:

Առաջին ենթագլխում ուսումնասիրվել և լուսաբանվել են կրթության տեղն ու դերը Հին Իրանում, բարձրագույն կրթությունը իրանական ու իսլամական մշակույթում, դիտարկվել է կրթության զարգացման ուղին Իրանում իսլամի ընդունումից հետո, կրթությունը իրանական Սեֆյան թագավորության ժամանակաշրջանում, Ղաջարական դինաստիայի օրոք, երբ առաջին քայլերն արվեցին նոր տիպի դպրոցներ հիմնելու և նոր կրթությունը ներմուծելու ուղղությամբ, այնուհետև անդրադարձել ժամանակակից պատմությանը և հասել մինչև Իրանի Իսլամական Հանրապետության շրջանը:

Երկրորդ ենթագլխում ներկայացվել են Իրանի բարձրագույն կրթության համակարգի ներկայիս գլխավոր կառույցները, որոնք են Մշակութային հեղափոխության գերագույն խորհուրդը, Բարձրագույն կրթության նախարարությունը և բուհերը: Նշվել է, որ Իրանի բարձրագույն կրթությունը բաղկացած է պետական և ոչ-պետական հատվածներից, ուսուցումը կազմակերպվում է առկա, հեռակա և հեռավար եղանակներով, իսկ Ազատ համալսարաններում՝ նաև ճկուն ժամանակացույցով, այսինքն առավելագույն և նվազագույն թույլատրելի բեռնվածությամբ: Բացատրվել է ուսանողների ընդունելության կարգն Իրանում, բարձրագույն կրթության մակարդակները, ներկայացվել են բուհերի գիտխորհուրդների կառուցվածքը, կազմը և գործունեությունը:

Երրորդ ենթագլխում Բարձրագույն կրթության վիճակի մասին ընդհանուր պատկերացում կազմելու նպատակով տրվել են բարձրագույն կրթության գլխավոր ցուցանիշները և վիճակագրական տվյալները Իրանում և Բուշեի նահանգում:

Չորրորդ ենթագլխում քննվել է բարձրագույն կրթության որակի պահպանման ու բարձրացման հիմնահարցը, որը վերջին տարիներին մի շարք երկրների կրթության համակարգերում առանձնակի կարևորություն է ստացել և լուրջ աշխատանքներ են տարվում որակի շարունակական վերահսկման, գնահատման ու ապահովման ուղղությամբ: Այս ենթագլխում տրվել են կրթության որակի տարբեր սահմանումները և ընկալումները, քննարկվել որակի ապահովման ու բարելավման խնդիրները, որակի գնահատման տարբեր չափանիշները, այնուհետև խոսվել է Իրանի բարձրագույն կրթության որակի բարելավման անհրաժեշտության մասին:

Երկրորդ գլուխը կրում է հետևյալ խորագիրը՝ **«Տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների դերը կրթության ոլորտում»**, այն բաղկացած է չորս ենթագլուխներից:

Առաջին ենթագլուխը հատկացված է տեղեկատվական և հեռահաղորդակցության ոլորտի հասկացություններին, խնդիրներին և առանձնահատկություններին, որտեղ վերլուծվել և լուսաբանվել են SS-ի էությունը, տեղեկատվական հեղափոխություն հասկացությունը, տեղեկատվական գրագիտությունը և այդ գրագիտությամբ օժտված մարդու առանձնահատկությունները: Առանձին ուշադրություն է դարձվել և քննվել SS-ի, համաշխարհայնացման և կրթության փոխառնչությունները, նշվել են SS-ի տարբեր բաղադրիչները, հեռահաղորդակցության գործիքներն ու սարքավորումները, SS-ի զարգացմանը նպաստող գործոնները և SS-ի տարբեր գործառույթները, ներկայացվել են SS-ի միջոցով իրականացվող ուսուցման տարբեր ձևերն ու տեսակները:

Երկրորդ ենթագլուխը քննում և վերլուծում է կրթության ոլորտում SS-ի ներդրման տարբեր կողմերը և հետևանքները, բարձրագույն կրթության որակի ապահովման և բարձրացման և մարդկային ներուժի զարգացման գործում ունեցած նշանակությունը: Այս ենթագլխում, լուսաբանելով կրթության համակարգում SS-ի ներդրման անհրաժեշտությունը և հրատապությունը, նշվում են անհրաժեշտ ենթակառույցները,

ուլորտի զարգացմանը նպաստող գործոնները և անհրաժեշտ նախադրյալները քննարկվում են նաև SS-ի միջոցով կամ օգնությամբ իրականացվող կրթության առանձնահատկությունները:

Երրորդ ենթագլխում անդրադարձ է կատարվում Իրանի բարձրագույն կրթության ոլորտում SS-ի ներդրման ներկա վիճակին և ներկայացվում է ընդհանուր պատկերը, բերվում են այս ոլորտի գլխավոր ցուցանիշները Իրանի մասշտաբում, ինչպես օրինակ էլեկտրոնային պատրաստվածության ցուցանիշը, թվային հնարավորությունների ցուցանիշը, թվային հասանելիության ցուցանիշը: SS-ի ցուցանիշներն Իրանում համեմատվել են տարածաշրջանի, Եվրոպայի և միջազգային ցուցանիշների հետ և ներկայացվել համապատասխան գրաֆիկներով: Տվյալները մատնանշում են վերջին տարիներում համակարգչի կիրառման և հեռահաղորդակցության նորագույն միջոցների արագ ընդլայնումը Իրանի հասարակության մեջ: Բերվել է նաև Իրանի համալսարանների վերամետրիկ գնահատումը:

Չորրորդ ենթագլուխը վերլուծում և քննում է SS-ի ներդրման դժվարությունները, արված քայլերը, մարտահրավերները և մոտեցումները: Մեկնաբանվում են SS-ի ներդրման և ազդեցության չորս կողմերն ու հարթությունները, դրանք են 1. Սարքավորումները (սարքակազմ/սարքաշար) 2. Ծրագրային ապահովումը կամ համակարգչային կիրառական ծրագրերը 3. Մարդկային գործոնը 4. SS ոլորտի կազմակերպչական և ենթակառուցվածքային գործոնը: Ելնելով SS-ի ներգործության և ազդեցության այս չորս հարթություններից, ներկայացվել է մոդել, որը ցուցադրվել է համապատասխան սխեմայում: Այս ենթագլուխը, հանգամանորեն քննելով Իրանի սոցիալ-տնտեսական պայմանները և վիճակը, մեկնաբանում և ընդգծում է SS-ի ներդրման հետևանքները և ազդեցությունները բուհերում՝ կրթության որակի ապահովման համակարգում:

Երրորդ գլխի վերնագիրն է՝ «Իրանի բարձրագույն կրթության որակի ապահովման գործում տեղեկատվական տեխնոլոգիաների դերի վերաբերյալ սոցիալաբանների արդյունքների վերլուծություն»:

Սոցիալաբանների նպատակն էր ուսումնասիրել SS ոլորտի գործոնների դերը Բուշեի նահանգի համալսարանների կրթության որակի բարձրացման գործում: Դասային պատահականության սկզբունքով ընտրվել են **404** ուսանողներ ու դասախոսներ և նրանց մեջ բաժանվել են հարցաթերթեր: Ստացված պատասխանները վերլուծվել են բնութագրական վիճակագրության տեխնիկաների միջոցով (քանակական աղյուսակներ, տոկոսային կուտակումներ, միջին, ստանդարտ շեղում), ինչպես նաև վերլուծական վիճակագրության տեխնիկաներով (միջինների նշանակալիության մակարդակի որոշման համար կատարվել է T թեստ և Փիրսոնի կորելյացիայի գործակից, վարիացիայի վերլուծություն՝ F թեստ և SS բաղադրիչների ազդեցության աստիճանավորման համար՝ բազմագործոնային վերլուծություն):

Սոցիալական փոփոխության բազան

Սոցիալական փոփոխության բազան կազմում են Բուշեհրի «Իսլամական ազատ համալսարանի», «Պարսից Ծոց», «Փայամ նուր», «Ալ-Ջահրա», «Գիտակիրառական» և «Բժշկական» համալսարանների փորձագիտականի, բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողները և դասախոսները:

Վերը նշված բազայից սոցիալական մասնակցել և հարցաթերթիկներին պատասխանել են **81** դասախոսներ և **323** ուսանողներ, ընդամենը **404 մարդ**:

Սոցիալական գործիքը

Մույն հետազոտության գործիքը **14** հարցերից բաղկացած մեր կողմից մշակված հարցաթերթն է: Պատասխանները գնահատվել են Լիքերթի սանդղակով, և յուրաքանչյուր հարցի պատասխանները խմբավորվել են երեք տարբերակներով՝ *բարձր*, *միջին*, *ցածր*:

Սոցիալականները կատարվել են երկու խմբերում՝ ուսանողներ և դասախոսներ:

Սկզբում համապատասխան աղյուսակներով և գծապատկերներով ներկայացվել են հարցմանը մասնակցած ուսանողների և դասախոսների ժողովրդագրական տվյալներն՝ ըստ սեռի, կրթության մակարդակի, ուսման ճյուղի, մասնագիտության, պետական և ոչ պետական հատվածների, աշխատանքային տարիների և այլն, այնուհետև ներկայացվել և վերլուծվել են հարցաթերթերից ստացված պատասխանների վիճակագրական ցուցանիշները:


Մտքեր ներկայացված են **սոցիալական հարցերից մի քանիսը** և հարցմանը մասնակցած ուսանողների ու դասախոսների պատասխանների պատկերը: Վերլուծվել են ստացված արդյունքները:

Դասախոսների շրջանում

Հարց 1. Համացանցի և համակարգչի կիրառումն ի՞նչ չափով է ազդում հետազոտական ոգու խթանման վրա

Գծապատկեր 1.

Դասախոսների պատասխանների բաշխվածությունը (%-ով)




Վերոնշյալ տվյալները վկայում են, որ դասախոսների 70.74 տոկոսի կարծիքով, համացանցի ծառայություններից և համակարգչից օգտվելը մեծ չափով խթանում է հետազոտական ոգին: 26.8 տոկոսն այդ ազդեցությունը միջին չափով է գնահատել, իսկ ցածր գնահատական տված դասախոսները չնչին տոկոս են կազմում՝ 1.2 տոկոսը:

Տեղեկատվական տեխնոլոգիաներն այսօր լայն հնարավորություններ և ինֆորմացիոն ահռելի բազա են ընձեռում յուրաքանչյուր հետազոտողին, սերտ փոխգործակցության հնարավորություն տալիս տարբեր առանձին հետազոտողներին և խթանում հետազոտության հանդեպ մոտիվացիան ու հետաքրքրությունը: Նման հնարավորություններից օգտվելը և դրանց արդյունավետ ներդրումը Իրանի բարձրագույն կրթության համակարգում կարող է նպաստել հետազոտական ոգու խթանմանը, համակարգված հետազոտությունների իրականացմանը:

Հարց 2. Համացանցի և համակարգչի կիրառումն ի՞նչ չափով է ազդում ուսուցման մեթոդների և կրթության որակի բարելավման վրա

Գծապատկեր 2.

Դասախոսների պատասխանների բաշխվածությունը (%-ով)



Վերոնշյալ գծապատկերի տվյալները վկայում են, որ դասախոսների մեծամասության, այսինքն 64.62 տոկոսի կարծիքով, համակարգչային տեխնոլոգիաների ու հնարավորությունների օգտագործումը կարող է մեծապես նպաստել ուսուցման մեթոդների համալրման և դասի մատուցման արդյունավետության բարձրացմանը, իսկ 30.51 տոկոսն այդ ազդեցությունը գնահատում է միջին չափով և 4.90 տոկոսն էլ այն


գնահատում է ցածր: Համակարգիչն ու համացանցը կարող են խթանել ուսուցման ինտերակտիվ ու թիմային մեթոդները և դասախոս-ուսանող փոխգործակցությունը: Այս հնարավորությունների կիրառման տարբեր ձևերի հմտությունը և լիարժեք իմացությունը դասախոսների կողմից կարող է ավելի բարձրացնել այդ հնարավորությունների արդունավետության մասին դրական կարծիքի ցուցանիշները:

Ուսանողների շրջանում

Հարց1. SS տեխնոլոգիաների և սարքավորումների կիրառումն ինչքանո՞վ է ազդում ուսուցման մեթոդների և կրթության որակի բարելավման վրա

Գծապատկեր 3.

Պատասխանների բաշխվածությունն ուսանողների խմբում (%-ով)




Վերոնշյալ գծապատկերի տվյալները վկայում են, որ ուսանողների շուրջ 53.25 տոկոսի կարծիքով, ուսուցման գործընթացում տեղեկատվական ու համակարգչային տեխնոլոգիաների ու սարքավորումների օգտագործումը կարող է մեծապես ազդել ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացմանը: SS-ը նպաստում են գիտելիքի և տեղեկատվության փոխանցման ու փոխանակման արագ և դյուրին կազմակերպմանը, կենսունակ մեթոդների կիրառմանը և ուսանողների ներգրավվածության խթանմանը: Ուսանողների 34.98 տոկոսն այդ ազդեցությունը միջին մակարդակի վրա է գնահատել, իսկ 11.75 տոկոսը ցածր է գնահատել այդ ազդեցությունը: Իրանի բուհերում SS-ի հիման վրա իրականացվող կրթության տարբեր ձևերի ու եղանակների ընդլայնումը և դրանց ակտիվ կիրառումը կարող են ավելի բարձրացնել ուսանողների դրական պատասխանները, քանի որ ուսանողների մոտ

առավել հստակ պատկերացում կձևավորվի այդ տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունների և առանձնահատկությունների վերաբերյալ:

Հարց 2. Ուսանողների համակարգչային իմացությունը և ինտերնետային հմտություններն ի՞նչ չափով են ազդում ուսումնառության արդյունավետության վրա

Գծապատկեր 4.

Ուսանողների պատասխանների բաշխվածությունը




Վերոնշյալ տվյալները վկայում են, որ հարցվողների 62.19 տոկոսի կարծիքով, ինտերնետային ծառայություններից և համակարգչից օգտվելու իմացությունը և հմտությունները բարձրացնում են ուսումնառության արդյունավետությունը: Հարցվողների 32.50 տոկոսը միջին չափով է գնահատում այդ ազդեցությունը, իսկ 5.31 տոկոսը՝ ցածր: Հայտնի փաստ է, որ մարդն ավելի հետաքրքրվում և սիրում է այնպիսի աշխատանքներ, որոնց մեջ իրեն հմուտ ու իրազեկված է զգում: Յուրաքանչյուր մարդ ինչքան շատ է հմտանում, այնքան լավ է կարողանում ընկալել տվյալ ոլորտը և առավել ինքնավստահ ու ստեղծագործաբար կիրառել հնարավորությունները: Վերը նշված արդյունքներն ընդգծում են համակարգչային գիտելիքների և հմտությունների անհրաժեշտության վերաբերյալ իրանցի ուսանողների բարձր մոտիվացիան: Միջին գնահատականները կարող են ավելի բարձրանալ, եթե ուսանողները հնարավորություն ունենան խորապես ծանոթանալ և հմտանալ ուսումնառության գործընթացում SS-ի կիրառման և օգտագործման տարբեր կողմերին: Բուհերի ուսումնական ծրագրերում համակարգչային գիտելիքների ուսուցման ներառումը տարբեր մակարդակներում կարող է նպաստել այս գործին, որով և խթանել

ուսանողների ուսումնական առաջադիմությունը և նախապատրաստել նաև SS ոլորտին անհրաժեշտ ապագա մասնագետներուժը:

Հարց 3. Բուհերի կողմից առանձին կայքէջի ստեղծումն ի՞նչ չափով է ազդում ուսանողների տեղեկացվածության և իրազեկվածության բարձրացման վրա

Գծապատկեր 5.

Ուսանողների պատասխանների բաշխվածությունը



Վերոնշյալ տվյալները վկայում են, որ ուսանողների 57.51 տոկոսի կարծիքով, բուհի կողմից առանձին կայքէջի ստեղծումը կարող է բարերար ազդեցություն ունենալ ուսանողների տեղեկացվածության և ուսումնառության վրա, հարցվողների 30.67 տոկոսը այդ ազդեցությունը գնահատում է միջին և 11.82 տոկոսը՝ ցածր: Ներկայումս միջազգային մակարդակում որևէ բուհի գործունեության որակը աստիճանակարգելու գլխավոր չափանիշներից մեկը բուհական ակտիվ ու արդյունավետ կայքէջ ունենալն է, այդ կայքէջում տեղադրված տեղեկատվության ծավալն ու բովանդակությունը, դիտումների և հղումների քանակը: Համալսարանի կողմից իր կատարած աշխատանքների և ծառայությունների թափանցիկությունն ու հասանելիությունը, տրված տեղեկատվության համապարփակությունն ու օգտակարությունը կարող են բարձրացնել և՛ կրթության որակը, և՛ կրթության կառավարման արդյունավետությունը տվյալ կրթօջախում և խթանել ուսանողների ներգրավվածությունը բուհական կյանքում: Այս կարծիքին է նաև հարցվողների մեծամասնությունը, որոնք բարձր կամ միջին չափով գիտակցում են այս չափորոշի կարևորությունը, և արդյունքում միայն ուսանողների փոքր տոկոսն է ցածր գնահատել այս գործոնի դերը:

Գործոնային վերլուծության աղյուսակի արդյունքների համաձայն, ըստ հարցմանը մասնակցած ուսանողների և դասախոսների կարծիքների, կրթության որակի վրա ամենաշատն ազդող գործոնները հետևյալ հերթականությամբ են.

Ուսանողների կարծիքով

1. Ծրագրային ապահովման և տեղեկատվական գործոն (0.857)
2. Կազմակերպչական գործոն (0.836)
3. Մարդկային ներուժի գործոն(0.824)
4. Սարքավորումների (սարքակազմ, սարքաշար) գործոն (0.789)

Դասախոսների կարծիքով

1. Կազմակերպչական գործոն (0.888)
2. Սարքավորումների (սարքակազմ, սարքաշար) գործոն (0.836)
3. Մարդկային ներուժի գործոն (0.794)
4. Տեղեկատվական գործոն (0.773)

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թեմայի հանգամանակից ուսումնասիրությունը մեզ հանգեցրեց հետևյալ եզրակացությունների.

1. Հետազոտության արդյունքները և սոցիալական տվյալները (դասախոս, ուսանող) վկայում են, որ տեղեկատվական ու հեռահաղորակչական տեխնոլոգիաները մեծ ազդեցություն կարող են ունենալ Իրանի բարձրագույն կրթության որակի բարելավման գործում:

2. Տեղեկատվական տեխնոլոգիաների տարբեր գործոնների, դրանց թվում համակարգչային սարքավորումների/սարքաշարի գործոնի (համակարգչի և ինտերնետի) կիրառումը բարձրագույն կրթության համակարգում կնպաստի գիտելիքի և տեղեկատվության արագ և դյուրին փոխանցմանն ու փոխանակմանը:

3. SS-ի ազդեցությունն առավել արդյունավետ է նրա բոլոր գործոնների ներդրման դեպքում: Սոցիալական արդյունքները ցույց տվեցին, որ ծրագրային ապահովման ու տեղեկատվական գործոնի, այսինքն էլեկտրոնային սկզբնաղբյուրների և տեքստերի ու թեմաների ներդրումը մեծ նշանակություն ունի կրթության որակի բարձրացման ուղղությամբ:

4. SS ոլորտի արդյունավետ ներդրման համար կարևոր է նաև մարդկային ներուժի և համապատասխան մասնագետների առկայությունը, նրանց վերազինումն ու պատրաստումը, քանի որ SS-ի կիրառումը հնարավոր է միայն այս գործոնի առկայության և նրա հմտության ու պատրաստվածության դեպքում:

5. Համարժեք կարևոր է SS ոլորտի կազմակերպչական գործոնի դերը, այսինքն համալսարանի և բարձրագույն կրթության պատասխանատուների կողմից այդ խնդրի կազմակերպման և աջակցության կարևորությունը:

6. Բարձրագույն կրթությունն այսօր Իրանում պետք է լինի մրցունակ և արդիական, որպեսզի կարողանա համաշխարհային զարգացումներին ու փոփոխություններին համընթաց առաջ շարժվի: Այս ուղղությամբ մեծ ու առաջնային ազդեցություն ունի SS ներդրումը բարձրագույն կրթության ոլորտում:

7. SS-ի ներդրումը կփոխի Իրանի կրթության ավանդական համակարգում ուսուցման պասիվ ու անկենսունակ ձևերը և այն կդարձնի ավելի ինտերակտիվ, ճկուն և ուսանողակենտրոն՝ խթանելով ուսանողի անհատական ստեղծագործությունը և նորարարության ու նախաձեռնողական ոգին:

8.Նկատի առնելով Իրանի աշխարհագրական ընդարձակ տարածքը և մեծ հեռավորությունները, SS-ի ներդրումը կարող է կրճատել այս տարածությունները, և Իրանի բոլոր նահանգներին ու հեռավոր մարզերին տալ կրթության զարգացման հավասար ու համաչափ հնարավորություններ:

9.Ներկայումս Իրանի համալսարանները հնարավորություն չունեն ներգրավել բարձրագույն կրթության բոլոր դիմորդներին: Բացը լրացնելու և դիմորդների մեծ հոսքը բավարարելու ուղղությամբ SS-ի ներդրումը կարող է մեծացնել կրթության ոլորտում ընդգրկվածությունն ու նրա հասանելիությունը:

10. Իրանը, լինելով զարգացող երկիր, այսօր առավել, քան երբևէ զգում է հասարակության և անձի պահանջներին համապատասխանող կրթություն ունենալու կարևորությունը, քանի որ տեղեկատվական դարը պահանջում է այնպիսի աշխատուժ և մարդկային ներուժ, որը կկարողանա հմտորեն օգտվել տեխնոլոգիաներից՝ ստեղծագործության և արդյունարարության խթանման ուղղությամբ: SS-ի կիրառումը կխթանի բարձրագույն կամ միջին մասնագիտական կրթությամբ աշխատուժի պատրաստման գործը և աշխատաշուկայի պահանջները:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1.Հաբիբ Ղոլամ Շահգարի, Դիտարկումներ Իրանի բարձրագույն կրթության որակի մասին, «Մանկավարժության միտք», Երևան,2010 թ., թիվ 1-2, էջ 147-158:

2. Հաբիբ Ղոլամ Շահգարի, Հեռավար կրթությունը և դրա ընդլայնման անհրաժեշտությունը Իրանում, «Մանկավարժության միտք», Երևան,2010 թ., թիվ 3-4, էջ 252-258:

3.Հաբիբ Ղոլամ Շահգարի, Տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների ազդեցությունը կրթության որակի վրա, «Կրթությունը և գիտությունը Արցախում», 2011 թ., էջ 142-148:

4.Հաբիբ Ղոլամ Շահգարի, Տեղեկատվական տարբեր բաղադրիչների ներդրման ազդեցությունն Իրանի բարձրագույն կրթության համակարգում, «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, 2013 թ., թիվ 10-12 (39), էջ 84-87:

Хабиб Голам Шахзари

РОЛЬ ИНФОРМАЦИОННЫХ ТЕХНОЛОГИЙ В СИСТЕМЕ ОБЕСПЕЧЕНИЯ КАЧЕСТВА ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ ИРАНА

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01 «Теория и история педагогики».

Защита состоится 28 марта 2014 г. в 14⁰⁰, на заседании действующего в ЕГУ 065 профессионального педагогического совета по ВКК. Адрес: 0025, 52 А, улица Абовяна, Ереван, корпус факультета армянской филологии ЕГУ, аудитория 203.

РЕЗЮМЕ

Актуальность темы:

На сегодняшний день развитие информационных и коммуникационных технологий в корне изменило человеческую жизнь в сфере образования, индустрии, торговли, науки, культуры, стимулируя новшества и создавая новое качество и уровень. Сущность и понятие разных последствий этого явления – необходимое условие “Информационного века”. В современном мире основное общеобразовательное обучение недостаточно для всей жизни учащихся, оно нуждается в периодической разработке. Возможности ИТ в целом могут способствовать процессу переподготовки учащихся, самообразованию и саморазвитию личности, причем, и с теоретической и с практической точек зрения знаний и навыков, а в системе образования внедрение этих возможностей требует культурных, общественных и экономических соответствующих подсистем. **Актуальность исследования** обусловливается глубоким влиянием ИТ в системе образования.

Цель исследования:

Целью диссертации является исследование и анализ влияния внедрения ИТ в сфере высшего образования Ирана в направлении улучшения качества образования.

Задачи исследования:

1. В общих чертах наблюдать за направлением исторического развития высшего образования Ирана.
2. Разъяснять политику, цели, стратегию высшего образования Ирана.
3. Исследовать разные подходы, касающиеся внедрения ИТ в сфере образования.
4. Анализировать разные понятия и определения качества образования, прокомментировать также разные понятия, составляющие части, стороны, оборудования и подсистемы ИТ.

5. Анализировать сегодняшний уровень и состояние внедрения разных составных частей ИТ в системе высшего образования Ирана и сравнить его с другими странами.

6. Анализировать необходимость, влияние, последствия внедрения ИТ в сфере образования, особенности образования, осуществленного посредством ИТ.

7. Разработать анкету соц. опроса, касающегося обсуждаемого вопроса, осуществить соц. опрос среди лекторов и студентов ВУЗ-ов штата Бушегр и статистически проанализировать данные соц.опроса, оценить и прокомментировать полученные статистические результаты.

Научная новизна исследования:

Это исследование анализирует вопрос с новой позиции, исследуя влияние внедрения ИТ в университетах штата Бушегр Ирана и выявляя размеры влияния каждого из главных составляющих сфер ИТ (hardWare, software, человеческие ресурсы и организационные аспекты) в сфере повышения квалификации образования. В результате опроса, мы впервые выявили те данные, что для улучшения качества образования лекторы ВУЗ-ов подчеркнули организационную роль составных, а студенты- значение информационного фактора и программного обеспечения. На основе результатов исследования мы впервые пришли к тому выводу, что удовлетворение этих требований лекторов и студентов высшего образования Ирана, может благоприятно влиять на повышение качества образования.

Теоретическая значимость исследования.

В исследовании теоретически определились разные информационные и коммуникационные понятия и составные части. Были теоретически анализированы влияние и роль составных сфер ИТ в повышении и обеспечении качества высшего образования, были обоснованы значение и влияние главных составных сфер ИТ.

Практическая значимость исследования.

Результаты исследования могут быть полезны для ответственных систем высшего образования Ирана, для студентов, лекторов, и руководителей ВУЗ-ов штата Бушегр Ирана. Результаты исследования могут быть теоретической и практической основой в системе высшего образования Ирана в направлении разработки проектов, программ применения и внедрения ИТ.

Структура и объем диссертации.

Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка используемой литературы, приложения. Объем диссертации составляет 154 компьютерных страниц.

HABIB GHOLAM SHAHZARI

**THE ROLE OF INFORMATION TECHNOLOGIES IN THE SYSTEM OF
THE HIGHER EDUCATION QUALITY ASSURANCE OF IRAN**

Pedagogical sciences candidate thesis on the specialty 13.00.01 -“Theory and history of pedagogics”.

The defense of the thesis will be hold at 14⁰⁰, on Mars 28, 2014, in the Yerevan State University (address: 0025, Abovyan str. 52^a, Yerevan, YSU, Faculty of Armenian Philology, room N. 203).

SUMMARY

The relevance of the research

Nowadays, the development of information and communication technologies has radically changed the human life in sphere of education, industry, trade, science, culture, stimulating innovations and creating a new level and quality. The essence of this phenomena and its different consequences are necessary conditions of the "Information Age". In today's world the basic general and formal education is not enough for the whole students' life it needs in periodic development. IT capabilities can contribute the process of self-education and self-development of a person, more overaccording to theoretical and practical knowledge and skills, and in the education system the implementation of these capabilities requires a cultural, social and economic corresponding subsystems. **Modernity** of research is due to the profound influence of IT in education system. It is more urgent and necessary, especially in Iran, as a developing country.

The aim of the research:

The aim of this dissertation is to study and analyze of the impact of the introduction of IT in higher education of Iran to improve the quality of education.

The objectives of the research:

1. In general, observe the direction of the historical development of higher education in Iran.
2. Clarify politics, goals, strategies of higher education in Iran.
3. Explore different approaches regarding the introduction of IT in education sphere.
4. Analyze the determination of the quality and education definitions, comment also IT different concepts, component parts, sides, equipments and subsystems of IT.

5. Analyze the current level and the status of implementation of various components of IT in higher education of Iran.

6. Analyze the need, impact, consequences of investment of IT in education, especially education, carried out by IT.

7. Develop social profile questionnaire relating to the subject matter, implement social survey among lecturers and students of Universities of State Bushehr and statistically analyze survey data, evaluate and comment on obtained the statistical results.

Scientific novelty of the research:

This study examines the issue from new position, exploring the effect of the introduction of IT in Universities of state Bushehr of Iran and identifying the impact of each of the main areas of IT components (hardware, software, human resource and organizational aspects) in the field of education system. The survey identified the data that to improve the quality of education lecturers of the Universities emphasized the role of the organizational component, but students value the information factor and software. On the basis of the research results we first came to the conclusion that the satisfaction of these requirements of lecturers and students of higher education of Iran, may favorably affect the quality of education.

Theoretical value of the research:

Different concepts and components of information and communication were theoretically determined in the research. There were theoretically analyzed the impact and role of composite spheres of IT in improving and ensuring the quality of higher education, have been substantiated importance and influence of the main components of the IT sector.

The practical value of the research:

The results can be useful for production systems of higher education of Iran, for students, lecturers and managers of universities of the State Buser of Iran. The results of research can be theoretical and practical foundation in the higher education system of Iran in the direction of Iran's development projects, programs, application and implementation of IT.

Structure and volume of the work

The thesis consists of an introduction, three chapters, conclusions, list of used literature, applications. Volume of dissertation is 154 computer pages.

